երկնչիմ արդել առնել, ո(ր)պ(էս) քանիցս կամեցեալն մերայինքն առնել միաբանու(թ)ի(ւն) ընդ սրբոյ եկեղեցւոյ, բայց ի ձեռն չարաճըչկաց խափանումն է լեալ, իսկ մերս մարդկային կարծես այսպէս նեղէ զմեզ, քանզի ի դալն մեր պատահեցաք ի Կոստանդնուպօլիս, եւ դտաք զվարդան եպ(իսկոպո)ս անդ եկեալ յաղագս դերեաց ազատու(թ)ե(ան), եւ իմացաւ զգալստեան մերում զպատճառ, եւ հոգոյ հանեալ ասաց ո՛հ թէ չդայր մինչ ես հասանէի, զի իմո դ(ա)լստ(եա)ն մեծ պատճառ այս է զի ի նմ(ա)նէ չարախօսու(թ)ի(ւն) բազում է հասեալ ի Հռոմ, նախ ես երթեալ հարդեցիս զճանապ(ա)րհն եւ ապա եկեալ մեծարանօք ածիս. եւ վաղվաղակի եկ ի կոստանտնուպօլսէ եւ դնաց, անընդունակ եղեալ ի տեղի եղ(եա)լ Հայոցն սակս իւրոցն բարուց, եւ հասեալ ի Թօխատ ձեռնարկեալ ժողովի սակս դերեացն, եւ անտուստ առաքեալ նմա թուղթ սակս զգուշացուցանելոյ զնայ, եւ Բ (երկու)ս թուղթս ումենա վաճառականի ձեռամբ յայս կոյս առաքեալ, եւ ինքն լեալ յիւրում գործի զդրամ ժողովէն, զկնի հետէ տասն աւուրց այլ վաճառական եկեալ հասեալ է յառաջնոյն որք եւ երկոքեան եկե(ա)լ պատմեցին մեզ այսպէս, թէ վ(արդան) եպ(իսկոպո)ս ի մէջ պ(ա)տ(ա)ր(ա)զին ընկալեալ թուղթ ի պատրիարգին, զիւրումն թղթոյ պ(ա)տ(ա)սխ(ա)նին, այնքան ճեպով եկ մինչ զի հաց եւս չճաշակեաց. վասն որոյ մեծ վարանումն պատեաց զմեզ, կարծելով թէ դուցէ խաբեբային այն մին հաւատացեալ արդելս տացէ ի դ(ա)լոյ եւ ծառայ ձեր մշտնջենաւոր, սուտակասպաս երեւեսցի, եւ երկունք մեր վիժեալ դըտցի, եւ երկու կենօք մեք սեւերես: Քանզի այս ի Զ (6) ամիս է որ մեք յայսմ ցաւակցու(թ)ե(ան) կամք, այժմ այսպիսի վիրաւործու(թ)ի(ւն)ս տեսանեմք. Եւ արդ կամ ի մէջ մեծի վարանման, ցուրտս եհաս, երկնչիմ ըստ վերոյգրեց(ե)լ(ո)յն զն(ո)ր(ա) յամէն, եւ ծերու(թ)ի(ւն) մեր նախ պատեալ զմեօք. ի վէնէտիկս եւս մեծ կոտորումն դայ, եւ զմահ իմ հ(ա)ն(ա)պ(ա)զ առաջի աչաց ունիմ, բայց խնդրեմ զի թէ իցէ հնար տալ մեզ հրաման դալ յերկրպագու(թ)ի(ւն) սրբու(թե(անդ) տեղեացդ, եւ փոչոյ ս(րբո)ց ոտից համբոյր վեհապետին, և ձերում վսեմադունեղի տէրու(թե(ան), ո(ր)պ(էս) զի մեղսաներկ անձն իմ առցէ թողու(թ(ւն) յամ(ենայն)ի յիւրոց անցանաց. և ապա մահ իմ ընդ ոտիւք ձեր լիցի, բացայայտցանէ ոչինչ իմիք կարոտու(թ)ի(ւն) ոչ ունիմ, զի ուխտ իմ այս է զոր եկաք ի կատարել. մանաւանդ թէ զմեր մոլորեալ ազն որք ոչխարք տ(եառ)ն են ածեալ տեսից ի փարախ նորին, եւ եթէ յայնմիկ միջոցի դայցէ պ(ատր(իարդ)ն մեր, կամ թէ լուիցեմք ընդհամբաւ գալստեան նորին բարւոք է, թէ ոչ յամ(ենայն) ժամ կամ պատրաստ հընազանդիլ հրամանաց վսեմութե(ան)ց ձերոց, քանզի եւ իբրեւ հարազատ որդի եկեղեցւոյ, ոչ խնայելով ի ծերու(թ)ի(ւն) իմ յանձն առի զայսքան վիշտ ճանապարհի եւ զայլ նեղու(թ)ի(ւն)ս. տեսանելով զբարի դիտաւորու(թ)ի(ւն) պատրիարգին մերոյ: Եւ այժմ եւս ընդ ամ(ենայն) ուրեք գրեցի վ(ա)ս(ն) ն(ո(ր(ա) զի մի պատրեցեալ ի խաբեբայից արդելանիցի ի ճանապարհէն իւրմէ, արդ եթէ ընդ դէմ ըղձից մերոց ձախորդութի(ւն) ինչ հանդիպիցի ներել աղաչեմ իմ անարժանութեան, զի եմ ձերում վսեմադունեղի տէրու(թ)ե(ան)ց:»

«Խոնարհադունեղ ծառայ
Առաքել եպիսկոպոս»:

Տարակոյս չկայ որ նամակը շահեկան է իբր Զուղայեցիի մասին եղած տարաձայնութեանց կարեւոր ամփոփում: Նամակին մէջ յիշուած քանիցս «պատիրարգն մեր» նոյն իսկ Յակոբ Զուղայեցիին կ'ակնարկէ: Հոս մաս առ մաս քննարկենք այս նամակը եւ զայն մերկացնենք:

Նամակագիրը ինքզինք կը Ջանայ ցոյց տալ մտերիմ եւ խորհրդակից Յակոբ Զուղայեցիի, մանաւանդ իբր թէ անոր դաղտնագէտ սրտակիցը: Ան կը գրէ որ նամակի գրութեան ժամանակ 12 Նոյեմբեր 1678ին տասնեւվեց ամիս է որ «ընդ պատրիարգին մերում եղեաք յաթոռոյն (Էջմիածնի) եւ մեծաւ ուխտադրրութեամբ բաժանեցաք ի մի միանց»: